ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - փուլ II

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգի վերաբերյալ

Գործողություն 1.11. Որակի ապահովում

Առաքելությունն իրականացվել է

Տկն Կարին Բլիքսի կողմից, Դանիայի վիճակագրություն

2017թ. մայիսի 10-12

Վերջնական տարբերակ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

STATISTICS DENMARK

Փորձագետի կոնտակտային տվյալներ

Կարին Բլիքս
Դանիայի վիճակագրություն
Սեյրոգադե 11
DK-2100 Կոպենհագեն Ø
Դանիա
Հեռ: +45 3917 3155
Էլ-փոստ: kwb@dst.dk

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 4
2. Գնահատում և արդյունքներ 4
3. Եզրակացություններ և առաջարկություններ 10
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք 12
Հավելված 2. Առաքելության ծրագիր 14
Հավելված 3. Հանդիպումների մասնակիցներ 15

Հապավումների ցանկ

ԵՄ	Եվրոպական միություն
ԱՎՀ	Ազգային վիճակագրական համակարգ (պաշտոնական վիճակագրության)
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Այս առաքելության զեկույցը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» Թվինինգ ծրագրի շրջանակներում: Սա բաղադրիչ 1-ի իններորդ առաքելությունն էր, որի համար պլանավորված գործողություններն իրականացվել են համաձայն ժամանակացույցի:
Առաքելության նպատակներն էին.

- Որակի կառավարման և որակի ապահովման շրջանակի վրա շարունակական աշխատանք
- GSBPM-ի քննարկման շարունակում
- GAMSO-ի նախնական քննարկում և ինչպես այն ներդնել ՀՀ ԱՎԾ-ում
- Քննարում առ այն, թե ինչպես ներդնել և վարել որակի ինքնագնահատում ՀՀ ԱՎԾ-ում

ԱԵ փորձագետն իր երախտիքն է հայտնում բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին, ում հետ հանդիպել է՝ նրանց աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար, որոնք ստացել է Հայաստանում իր գտնվելու ընթացքում, և ինչը մեծապես հեշտացրել է իր աշխատանքը: Սույն հաշվետվության մեջ տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են խորհրդատուին և որևէ կերպով չեն արտահայտում ԵՄ, ՀՀ ԱՎԾ կամ Դանիայի վիճակագրության տեսակետները:

2. Գնահատում և արդյունքներ

Սույն առաքելության առաջին օրն անցկացվեց ՀՀ ԱՎԾ որակի բաժնի հետ: Գնահատվեցին 2016թ.-ից օգոստոսից ի վեր զարգացումները: ՀՀ ԱՎԾ աշխատակիցները հսկայական աշխատանք են կատարել նախորդ առաքելությունից ի վեր:

Որակի թիմը բավական նոր էր 2016թ.-ին և նոր նոր էր սկսում իր գործունեությունը: Այժմ թիմն իր տեղում է, աշխատում է լավ: Թիմն աշխատել է ինտենսիվորեն՝ կոնվերտացնելով գործընթացների տեքստային նկարագրությունները այսպես կոչված «լողավազանի գծերի»: Բավական արդյունավետ կերպով թիմը կարողացել է կոնվերտացնել 14 վիճակագրական արտադրանքի նկարագրություններ, և նախատեսում է ավարտին հասցնել մնացած 34-ը (քանի որ որակի հռչակագրերով 139 վիճակագրական արտադրանքից 122-ը խմբավորված են 31 արտադրանքի, որոնք պետք է փաստաթղթավորվեն համաձայն GSBPM-ի):

Երկրորդ օրը սկսվեց նրանով, որ փորձագետը ներկայացրեց տարբեր ձևեր և գործիքներ, որոնցից օգտվում է Դանիայի վիճակագրությունը գործընթացերը այսպես կոչված «լողավազանի գծերով» փաստաթղթավորելու համար: Խոսվեց արտադրանքում լավ կառուցվածք պահովելու համար ֆայլերը պրակտիկ կերպով կազմակերպելու մասին: Փորձագետը հիմնավորեց, որ առավել պրակտիկ և շահավետ կլինի ֆայլերի կառուցվածքը կազմակերպել համաձայն GSBPM փուլերի՝ յուրաքանչյուր վիճակագրական արտադրանքի համար: Եթե դա արվում է, ապա օրինակ՝ *վերանայման և*

վավերականացման մասին 5.3 փուլը հեշտ կլինի յուրաքանչյուրի համար: Դա կպահանջի փաստաթղթերի պահպանման կառուցվածք ոչ թե անհատական սկզբունքով, այլև հետևելով թիմերին կամ բաժիններին:

Ներկայացված լուծումներից մեկն էր հեշտ տարբերակ առաջարկելը՝ Excel-ում մակրոս օգտագործելով: Սրա նկարագարդումը ներկայացված է նկար 1-ում: Այս ձևը «մկնիկի սեղմումով ակտիվացվող» է այն իմաստով, որ կարելի է սեղմել այն գործընթացի վրա, որը ուզում եք նկարագրել և կբացվի այդ գործընթացի համար էջը (կարող եք նաև ընտրել համապատասխան էջ էջերի ցանկից): Տրվում է նկարագրություն առ այն, թե ինչի մասին է այս գործընթացը: Կարող եք ընտրել նկարագրել գործընթացը տեքստով կամ «լողավազանի գծերով»: «Լողավազանի գծեր»-ը նկարելու ձև չի տրվում:

Նկար 1. Excel ձևչափով գործընթացների GSBPM քարտեզագրման օրինակ



Մյուս ցուցադրված ձևը Enterprise Architect ծրագրով է: Սա համալիր ծրագիր է շատ հնարավորություններով: Դանիայի վիճակագրությունը մշակել է ձև, որը համարյա օգտագործման պատրաստ տարբերակ է՝ գործընթացները «լողավազանի գծեր»-ով նկարելու համար: Այս ծրագրի հատկանիշներից մեկը բավականաչափ գրավիչ է: Այն է՝ փաստաթղթավորումը HTML-ով ներկայացնելու հնարավորությունը: Սույն հատկանիշը հնարավոր է դարձնում գործընթացի փաստաթղթավորումը ներքին ցանցում տեղադրելը՝ միայն աշխատակազմի օգտագործման համար: Սրա նկարագարդումը տրված է նկար 2-ում: Նկար 3-ում և 4-ում ներկայացված է HTML լուծման օրինակ ընդհանուրի և մեկ գործընթացի համար:

Նկար 2. EA-ով գործընթացների GSBPM քարտեզագրման օրինակ



Նկար 3. HTML լուծման օրինակ ներքին ցանցում. Այս օրինակում գույներն օգտագործված են պատկերելու, թե որ գործընթացներն են լավ փաստաթղթավորված, և որոնք չփաստաթղթավորված, ինչպես նաև որոնք չեն վերաբերում սույն վիճակագրական արտադրանքին:



Նկար 4. Մեկ գործընթացի համար HTML օրինակ



Նաև քննարկվել են SS օգտագործմամբ տարբեր լուծումներ պրն Վանուշի և տկն XX-ի հետ: Փորձագետը հետևողական կլինի EA ծրագրի արժեքի և Դանիայի վիճակագրությունում լիցենզիաների քանակի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվության տրամադրման հարցում՝ հաջորդ շաբաթ Աննի Ստահելի և Բո Գուլդեգերի կողմից իրականացվող առաքելության ընթացքում: Փորձագետը տեղեկացրեց, որ EA-ն այժմ նաև օգտագործվում է Դանիայի վիճակագրությունում SS ընթացակարգերի փաստաթղթավորման համար:
ՀՀ ԱՎԾ-ն *սովորել անելով* գործընթացի մեջ է: Կարևոր է մտապահել այն, որ բոլոր քայլերը և փորձերը (լավ ինչպես և ոչ այնքան լավ) լավ մեկնարկային կետ են հետագա քննարկումների համար, ինչպես նաև այն, որ չկա որևէ մեկ լուծում:

Շարունակականություն ապահովելու համար անհրաժեշտ է վիճակագրական համակարգում ներդնել որակի մշտադիտարկման կամ զարգացման համակարգ: Մշտադիտարկման նման համակարգը կարող է տարբեր ձևեր ստանալ, և ի լրումն որակի հռչակագրերի և գործընթացի փաստաթղթավորման այն պետք է ներառի նաև աուդիտ: Համակարգը պետք է գտնի ռիթմ որակի հռչակագրերի և գործընթացային փաստաթղթավորման համար, օրինակ որակի հռչակագրերը ենթակա են որակի ապահովման՝ յուրաքանչյուր անգամ թարմացվելիս (հիմնականում փոփոխությունների առաջացման ժամանակ) կամ նվազագույնը երկու երեք տարին մեկ: Մշտադիտարկումը պետք է իրականացվի որակի բաժնի կողմից:

Փորձագետը ներկայացրեց որակի հաշվեքննության համակարգը Դանիայում, մասնավորապես՝ թե ինչպես է այն ներկայացվել կազմակերպությունում և ինչպես է զարգացել համակարգը իր գործողության երեք տարիների ընթացքում: Դանիայի վիճակագրությունում որակի հաշվեքննության գործընթացի պատկերազարդումը ներկայացված է նկար 5-ում: Դանիայի վիճակագրությունում առաջին աուդիտներն իրականացվել են պարզ արտադրական գործընթաց ունեցող վիճակագրական պրոդուկտների համար: Այսպիսով որակի թիմը կարող է հարմարեցնել գործընթացները՝

նախքան առավել համալիր խնդիրներ վերցնելը: Գործընթացի նկարագրությունը կարելի է սկսել նախ պարզ վիճակագրական արտադրանքով՝ լավ և համապատասխան ընթացակարգ ստանալու համար: Այնուհետև աշխատանքը կարող է շարունակվել ամենակարևոր վիճակագրական արտադրանքի նկարագրությամբ: Ամենակարևոր վիճակագրական պրոդուկտների աուդիտից հետո կարող են նույնականացվել բարելավման կարիք ունեցողները: Դա կարող է արվել օրինակ որակի հռչակագրերի որակի ապահովման գործընթացում:

Նկար 5. Որակի հաշվեքննության գործընթացը Դանիայի վիճակագրությունում



Որակի հաշվեքննություն իրականացնելիս կարևոր է ունենալ համակարգ՝ գործողությունների ծրագրերին հետևելու համար: Սա կարող է կատարվել տարբեր ձևերով: Գործողությունների ծրագիրը պետք է ունենա վերջնաժամկետներ, որպեսզի այսպիսով հնարավոր լինի հետևել կատարմանը տարբեր վերջնաժամկետների հիման վրա: Դրանց կատարմանը հետևելը կարող է ներառել կոնկրետ ամսաթվեր, օրինակ՝ երեք ամիսը մեկ: Եթե նպատակն է հաշվեքննել ամբողջ վիճակագրական արտադրանքը կազմակերպությունում, ապա սա երկարաժամկետ ծրագիր է: Որակի հաշվեքննությունը ժամանակ և ռեսուրսներ պահանջող է և՛ որակի թիմի և՛ վիճակագրություն արտադրող բաժինների համար:

Որակի թիմը փորձարկել է ինքնագնահատման հարցաթերթը կազմակերպությունում: Մենք քննարկումներ ունեցանք որոշ հարցերի վերաբերյալ և խոսեցինք կազմակերպությունում ինքնագնահատման կարիքի մասին: Մենք խոսեցինք այն մասին, որ ինքնագնահատումները կարևոր են, բայց ոչ խստորեն անհրաժեշտ յուրաքանչյուր և ամեն վիճակագրական արտադրանքի համար այս պահին, ոչ ավելի քան դա պահանջվում է, ասենք, որակի աուդիտների հետ կապված:

GAMSO-ի վերաբերյալ պրեզենտացիա ներկայացվեց փորձագետի կողմից: Մոդելի յուրաքանչյուր մակարդակ քննարկվեց ՀՀ ԱՎԾ կազմակերպության առնչությամբ: GAMSO-ի նկարագրությունը ներկայացված է նկար 6-ում:

Նկար 6. GAMSO



3. Եզրակացություններ և առաջարկություններ

ՀՀ ԱՎԾ աշխատակիցները շատ լավ գործ են արել 2016թ. օգոստոսին կատարած նախորդ առաքելությունից ի վեր: Որակի թիմը առկա է և աշխատում է լավ և վերջին առաքելությունից հետո ընկած ժամանակահատվածում նրանք փաստաթղթավորել են 14 վիճակագրական արտադրանք՝ օգտվելով GSBPM-ի «լողավազանի գծեր»-ից: ՀՀ ԱՎԾ-ն *սովորել անելով* գործընթացի մեջ է որակի կառավարման ոլորտում և բոլոր քայլերը և փորձերը (լավ ինչպես և ոչ այնքան լավ) լավ մեկնարկային կետ են հետագա քննարկումների համար:

Շարունակականություն ապահովելու համար անհրաժեշտ է վիճակագրական համակարգում ներդնել որակի մշտադիտարկման/զարգացման համակարգ: Մշտադիտարկման համակարգը կարող է տարբեր ձևեր ստանալ, և ի լրումն որակի հոչակագրերին և գործընթացի փաստաթղթավորմանը այն պետք է ներառի նաև որակի աուդիտ: Անհրաժեշտ է սույն համակարգում գտնել որոշակի ռիթմ որակի հոչակագրերի և գործընթացային փաստաթղթավորման համար, օրինակ որակի հոչակագրերը յուրաքանչյուր անգամ թարմացվելիս (հիմնականում փոփոխությունների առաջացման ժամանակ) կամ նվազագույնը երկու երեք տարին մեկ ենթակա են որակի ապահովման: Մշտադիտարկումը պետք է իրականացվի որակի բաժնի կողմից:

Ամեն անգամ նոր վիճակագրական արտադրանք ներկայացնելիս որակի բաժինը պետք է ներգրավված լինի՝ երեշխավորելու, որպեսզի նոր արտադրանքը ստեղծվի GSBPM-ի հենքի վրա: Երբ իրականացվում են որակի աուդիտներ, կարևոր է ունենալ համակարգ՝

գործողությունների ծրագրերի կատարմանը հետևելու համար: Բոլոր վիճակագրական պրոդուկտները հաշվեքննելը երկարաժամկետ ծրագիր է:

Նաև առաջարկվում է սկսել փոքր քայլերով: Փոքր քայլերով սկսելը հնարավորություն է տալիս գտնել համապատասխան մոդել աուդիտի ընթացակարգի համար: Սկզբի համար առաջարկվում է սկսել որոշ շատ պարզ վիճակագրական պրոդուկտներից՝ լավ և համապատասխան ընթացակարգ ստանալու համար: Երբ ընթացակարգը պատրաստ լինի, կարելի է հաշվեքննել առավել համալիր վիճակագրական պրոդուկտները և շարունակել ամենակարևորներով: Ավելի ուշ աուդիտի կարող են ենթարկվել նոր պրոդուկտներ՝ օրինակ որակի հոչակագրերի համար որակի ապահովման գործընթացի միջոցով:

Առաջարկվում է իրականացնել փորձարկում՝ քարտեզագրելու համար ՀՀ ԱՎԾ կազմակերպությունը համաձայն GAMSO-ի:

Ինքնագնահատումը լավ է, բայց ոչ խստորեն անհրաժեշտ յուրաքանչյուր և ամեն վիճակագրական արտադրանքի համար այս պահին, ոչ ավելի քան դա պահանջվում է, ասենք, որակի աուդիտների հետ կապված: Հետևաբար առաջարկվում է ջանքերը ուղղել որակի աուդիտներին (ներառյալ ինքնագնահատումները), ուղղակի ինքնագնահատման փոխարեն:

Պետք է դիտարկել, թե ինչ համակարգչային ծրագիր է անհրաժեշտ GSBPM փաստաթղթավորմանն աջակցելու համար. Excel կամ այլ առավել զարգացած ծրագիր:

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական առաջադրանք

ԵՄ Թվինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15

2017թ. մայիսի 10-12

Բաղադրիչ 1. Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ

Գործողություն 1.11. Որակի ապահովում II

0. Բաղադրիչի պարտադիր արդյունքներ և չափանիշներ

Պարտադիր արդյունքներ.

- Վիճակագրական տեղեկատվության տարածման բարելավված համակարգ (2017թ. հուլիս)

Չափանիշներ.

- Պատրաստի վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ (2017թ. հուլիս)
- Մշակված տեղեկատվության տարածման համակարգի ռազմավարություն՝ընդունված Վիճակագրության պետական խորհրդի կողմից (2017թ. հուլիս)
- Սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացված, փորձարկված և ՀՀ ԱՎԾ կայքում հրապարակված հարցաթերթ (2017թ. հուլիս)
- Վիճակագրական տեղեկատվության տարածման գծով վերապատրաստված ԱՎԾ անձնակազմ (2017թ. հուլիս)

Գործողության նպատակը

- Որակի կառավարման և որակի ապահովման շրջանակի աշխատանքի շարունակություն
- Վիճակագրական բիզնես գործընթացների ընդհանրականմոդելի (GSBPM) վերաբերյալ քննարկումների շարունակություն
- Վիճակագրական կազմակերպությունների ընդհանրական գործառնական մոդելի (GAMSO) վերաբերյալ նախնական քննարկումներ և ինչպես պետք է այն ներկայացնել ՀՀ ԱՎԾ-ում
- Քննարկումներ, թե ինչպես պետք է ներդնել և իրականացնել որակի ինքնագնահատումներ ՀՀ ԱՎԾ-ում

2. Գործողության սպասվող արդյունքը

- Առաջարկություններ որակի կառավարման ապահովման, վիճակագրական բիզնես գործընթացների ընդհանրական մոդելի/GSBPM, GSBPM-իիրականացման և ՀՀ ԱՎԾ-ում որակի բաժնի աշխատանքների վերաբերյալ

3. Մասնակիցներ

<u>ՀՀ ԱՎԾ</u>
Բաղադրիչի ղեկավարներ

- Պրն Ստեփան Մնացականյան
- Տկն Անահիտ Սաֆյան
- Տկն Ռուզաննա Շաբոյան

Այլ աշխատակիցներ

- Պրն Արթուր Ամիրխանյան
- Տկն Անահիտ Գրբոյան

<u>ԱԵ փորձագետներ</u>
Տկն Կարին Բլիքս, փորձագետ, Դանիայի վիճակագրություն

Հավելված 2. Առաքելության ծրագիր

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասներ
	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԹՄԽ հետ	Քննարկել շաբաթվա ծրագիրը
Չորեքշաբթի, կեսօրից հետո *(10/5)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Իրավիճակի գնահատում և ՇԵ կողմից կատարված աշխատանքի ներկայացում վերջին առաքելությունից ի վեր Ընթացիկ առաքելության ակնկալվող արդյունքների ներկայացում ՇԵ կողմից
Հինգշաբթի, առավոտ *(11/5)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Վիճակագրական գործընթացների փաստաթղթավորման <<Լողավազանի գծերի>> քննարկումներ Որոնք են լինելու հաջորդ քայլերը
Հինգշաբթի, կեսօրից հետո *(11/5)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Վիճակագրական կազմակերպությունների ընդհանրական գործառնական մոդելի (GAMSO)-ի վերաբերյալ քննարկումներ և ինչպեսպետք է այն ներկայացնել ՀՀ ԱՎԾ-ում Քնարկումներ, թե ինչպես պետք է ներկայացնել և իրականացնել որակի ինքնագնահատումներ ՀՀ ԱՎԾ-ում
Ուրբաթ, առավոտ *(12/5)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Վերջնական եզրակացությունների պատրաստում, առաջարկություններ և առաքելության զեկույց
Ուրբաթ կեսօրից հետո *(12/5)*	ՀՀ ԱՎԾ	Ամփոփիչ հանդիպում ԱԵ ծրագրի ղեկավարի հետ	ԱԵ փորձագետների բացահայտումների ներկայացում և ձեռքբերված եզրակացությունների համաձայնեցում Ամփոփում և արդյունքների ներկայացում ՇԵ ծրագրի ղեկավարին

Հավելված 3. Հանդիպումներին մասնակցած անձինք

<u>ՀՀ ԱՎԾ.</u>

- Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
- Անահիտ Սաֆյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Ռուզաննա Շաբոյան, Որակի կառավարման բաժնի պետ
- Անահիտ Գրբոյան, Որակի կառավարման բաժին
- Արթուր Ամիրխանյան, Որակի կառավարման բաժնի

<u>ԹՄԽ թիմ.</u>

- Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, Թվինինգ մշտական խորհրդատու
- Լիանա Աթոյան, ԹՄԽ օգնական
- Անուշ Պողոսյան, թարգմանիչ